

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
 քաղաքացիների ընդունելության և դիմումների բողոքների ու  
 առաջարկությունների վերաբերյալ  
 15.10.2010թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ  
 որից ընդամենը՝ 5002

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	756	14.1
դիմում	4029	78.5
բողոք	462	9.2
կրկնակի	315	6.2
կոլեկտիվ	127	2.5

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 784

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	542	10.8
բողոք	242	4.8

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	257	5.1
կոմունալ-կենցաղային	54	1.7
շինարարական	207	4.1
արդ.ձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	15	0.2
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	49	0.9
առողջապահության	34	
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1396	27.9
օրենսդրական	73	1.4
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	138	2.7
ապարատային	44	0.8
այլ հարցեր	2732	54.8
սեփականաշնորհում	3	0.05

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2010Թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 5002 նամակներից մոտ 14.1%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 9.2, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 54.8%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 27.9%-ն անընչվում է ֆինանսական հարցերին, մոտ 2.7%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում, ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները բաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ (որոնք հիմնական մասն են կազմում).

- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 501%-ն առնչվում է բնակարանային, 1.7%-ը կոմունալ-կենցաղային, 4.1%-ը՝ շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 54.8%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 4500-ին տրվել է գրավոր, իսկ 477-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 25-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն